ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

ՈՒԽՏՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒՆ, ԱԶԳԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ԳԻՐՔ ՀԱՎԱՏՔԻ ՁՈՐԱՅՄԱՆ

Դժվար կլինի մեկ կամ երկու նախադասությամբ, թեկուզ մի հոդվածով՝ բնութագրել Ադամ քհն. Մակարյանի «Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)»[1] *աշխատությունը։ Հեղինակը նախ ընթերցողի համար պարզաբանում է քրիստոնեության իսկություն-ճշմարտությունը։ Այստեղ ոչ միայն մարդ-Աստված հարաբերություններն են, այլև հստակեցված է՝ ով է մարդը, և ով՝ Աստված։ Ներկայացված է Քրիստոսի Եկեղեցին, որ հավատացյալ ժողովուրդն է, իր աստվածային խորհուրդներով և ծիսական կերպերով։ Խնդրո առարկա աշխատության մեջ ոչ մի բան հին չէ և ոչ մի բան՝ իր խորքով, նոր չէ. նորը հեղինակի շունչն է, Աստծու նվեր շնորհն է, ինչպես և հեղինակի իմացության աստիճանն ու գործի ընդգրկման ծավալը։ Ակնառու են հեղինակի առաքինությունը և սերը՝ թե՛ մարդու, թե՛ Աստծու հանդեպ։*

Սկզբունքը մեկն է՝ դուրս չգալ Աստծու խոսքի գիտության սահմաններից, ամեն բան, երևույթ, դիտել Աստծու խոսքի լույսի ներքո։ Նոր Կտակարանը հնարավո՞ր է պատկերացնել, ամբողջականացնել առանց Հին Կտակարանի։ Իհարկե, չի կարելի, իհարկե, հնարավոր չէ։ Ադամ քհն. Մակարյանն առաջնորդվել է այս տեսանկյունով, այսինքն՝ նկատել է ծառի ճյուղի և արմատի միջև եղած կապը։ Ճշմարիտ է նրա դիտարկումը, երբ անդրադառնում է Հիսուս Քրիստոսի ծննդյան կերպին՝ տեսնելով երևույթների միջև եղած կապն ու նմանությունը. «Աշխարհի արարման ժամանակ առանց սերմի և առանց աշխատանքի, միայն Աստծու խոսքով

[1] *Սուրբ էջմիածին, 2017, 408 էջ (երրորդ հրատարակություն)։*

երկիրը բույսեր աճեցրեց և պտղաբերեց (հմմտ. Ծննդ. Ա. 11): Ճիշտ նույն կերպ էլ, այս դեպքում առանց մարդկային սերմի, միայն Աստծու զորությամբ կույսը հղիացավ և որդի ծնեց»:

Աստվածաշնչյան մի երևույթը կապի մեջ է ինչպես նախկինում տեղի ունեցած երևույթների, նույնպես և գալիք, տեղի ունենալիք երևույթների հետ: Հին Կտակարանում ուրվագծվում են Հիսուս Քրիստոսի նախատիպերը: Խոստման որդի Իսահակն, օրինակ, հնազանդ է իր Աբրահամ հորը, այսինքն՝ պատրաստ է ողջակիզման: Քրիստոս իր ուսերին կրել է՝ խաչափայտը, իսկ Իսահակը գառան զոհաբերության փայտը: Մեկն Աստծու Գառն է, մյուսն՝ Աբրահամի: Ադամ քահանան կապ-նմանություն է տեսնում Աստծու մարդ Մովսեսի օգնական Հեսուի և Հիսուս Քրիստոսի միջև. «Հեսուի առաջնորդությամբ հրեաների մուտքը Ավետյաց երկիր խորհրդանշում էր Քրիստոսի առաջնորդությամբ հավատացյալների մուտքը երկնքի Արքայություն»:

Ի տարբերություն հինկտակարանյան բոլոր նախատիպերի, Աստծու Որդին *կոչվում է* Մարդացյալ Աստված, *այսինքն՝ երկակի բնություն ունի,* մարդ *է և* Աստված: *Անդրադառնալով Սուրբ Ծննդի հետ կապված պատմական փաստերին, պարզում է նաև Ծննդի հետ կապված եկեղեցական ծեսերի խորհուրդները. երբ քառասուն օրական էր, ծնողները Հիսուս մանուկին բերում ընծայում են տաճարին: Երևույթը, որ եկեղեցական տոն է, հայտնի է* Տեառնընդառաջ *անվամբ: Հավատացյալները ծիսակատարությունից հետո, եկեղեցուց տուն վերադառնում են վառած մոմերը* ձեռքերին. «Ինչպես մոմի մեջ երեք իր կա՝ հուր, մոմի նյութը և պատրույգը, բայց մոմը մեկն է, նույնպես Քրիստոսի մեջ երեք բան կա, աստվածությունը՝ որպես հուր, անապական մարմինը՝ որպես մոմի նյութ և բանական հոգին՝ որպես պատրույգ, որից լուսավորվեցին բոլոր արարածները, ինչպես մարգարեացավ Սիմոն Ծերունին»:

Սովորույթ է դարձել. կրակ են վառում, պտտվում շուրջը ու թռչում վրայով: Ասում են՝ երևույթը բնույթով հեթանոսական է: Հեթանոսները կրակը պաշտում էին, մինչդեռ քրիստոնյաները կրակը դիտում են որպես Աստծու *ներկայության խորհրդանիշ: Անկեղ մորենու միջից չէ՞ր, որ Աստված խոսում էր Մովսես մարգարեի հետ: Հիսուս Քրիստոս բացահայտում ու ամբողջացնում է իր առաքելությունը.* «Երկրի վրա կրակ գցելու եկա» (Ղուկ. ԺԲ. 49): *Ադամ քահանան աստվածաշնչյան լույսի տակ մեկնում է Քրիստոսի խոսքը.* «Քրիստոսի ասած կրակը հոգու ուժն է, որը

ֆանդում է աշխարհի ներկա կառույցը. ոչնչացնում նրանում գտնվող ամեն ապականություն, վերափոխում է աշխարհի էությունը՝ պատրաստելով նոր, հավիտենականի ընդունակ գոյության»։ *Անշուշտ, այս խոսքի հիմքում ընկած է աշխարհի համար ցավելը, այն է՝ ապաշխարելը։*

Վերնագրին հետևում են ենթավերնագրերը, որոնց շրջանակներում հերթականությամբ պատկերում, մեկնաբանում է Քրիստոսի *պայծառակերպությունը, անապական մարմինը, որպես կատարյալ մարդ՝ Քրիստոսի արտասվելը, մահը, գերեզման-դժոխք իջնելը, այնուհետև հարություն առնել-համբարձվելը։ Կարծիքներ են բախվում, ինքն էլ փորձում է հիմնավորել իրենը.* «Գողը չէր ծալի վարշամակը և խնամքով մի կողմ չէր դնի»,- *ահա այս կերպ հավաստիացնում է, որ* Քրիստոսի *մարմնի գողություն տեղի չի ունեցել։*

Մարդը շարունակ հիշելով իր հողեղեն լինելը, դեպի հողը հակում ունենալու էր, սակայն «Քրիստոս իր համբարձմամբ մեր հողեղեն մարմինը վեր բարձրացրեց»։

Կարծիքներ են բախվում Սուրբ Հոգու *աստվածության և միայն աստվածային ուժ լինելու շուրջ։* Սուրբ Հոգին *անձ է, թե՞ պարզապես զորություն, որ ներգործում է։ Ահա Պետրոս առաքյալն ինչ է ասում խաբեության մեջ հայտնված Անանիային.* «Ինչո՞ւ Սուրբ Հոգուն ստեցիր, մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն» (հմմտ. Գործք Ե. 4)։ *Կարող է հարց առաջանալ՝ իսկ ինչո՞ւ* Հոգին *մեկի մեջ գործում է, մյուսի մեջ՝ ոչ։ Պատասխանը համոզիչ է.* «Եթե մի անոթ լի է որևէ հեղուկով, ապա այնտեղ չենք կարող լցնել... Այդպես էլ՝ եթե մեկը լցված է մարմնական կրքերով, ունի երկրային մտածելակերպ, չի կարող իր մեջ պահել աստվածային շնորհները»։ Սուրբ Հոգու *անձ լինելը չընդունողների միտքը հեռահար է, նրանք այդպիսով կասկածի տակ են առնում* Սուրբ Երրորդությունը։ *Պարզաբանումը դարձյալ աստվածաշնչյան ճշմարտությամբ է,* Հիսուս Քրիստոսի *բանաձևումով.* «Մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ. 19)։

Առավել խոր ու հանգամանալից փաստվում է, թե ինչ կարևոր է մեղքից հեռու լինելը։ Մեղքը այն վարագույրն է, որ մարդուն բաժանում է Աստծուց։ *Երբ* Մարդացյալ Աստված Հիսուս Քրիստոս *մարդկության մեղքը վերցրեց իր վրա ու այն գամելով խաչափայտին՝ ավանդեց հոգին, տաճարի վարագույրը վերից վար պատռվեց, մի բան, որ խորհրդանշում է մարդու միացում-հաշտեցումն* Աստծու *հետ։ Մեկ այլ դիտարկում. մարդը,*

որ հեռու է մեղքից, կարող է ունենալ անապական մարմին։ Ապականությունն, ուրեմն, մեղքի արդյունք է։

Մարդկությանը շարունակ հետաքրքրել ու նաև հուզել է, թե ինչո՞ւ Աստված *ընտրեց կույս Մարիամին, որն ընդամենը 13-14 տարեկան էր։ Անկասկած, ոչ միայն Մարիամի անմեղ լինելը, այլև ծագումն է կարևորվել, այլ կերպ ասած, երախայրիքը, որտեղից սկսվում է էություն-բնությունը։ Մարիամը երկար տարիներ սպասված, աղոթքով ծնված զավակ էր։ Երեք տարեկանում, ուխտի համաձայն, ծնողները նրան ընծայել էին Տաճարին։ Աշխարհ չէր մտել, փոխարենը մտել էր* Աստծու *տուն և ապրում էր* Աստծու *ներկայության մեջ։ Հայրը՝ Հովակիմը,* Աստծու *ընտրյալ Դավթի թագավորական ցեղից էր, մայրը Աննան՝ Ղևիի քահանայական ցեղից, դուստրն էր Մատթան քահանայի։ Մարիամը 15 տարեկան էր ընդամենը, երբ Քրիստոս ծնվեց Բեթղեհեմում, այսինքն՝ Մարիամի մայրական պապ Մատթանի ծննդավայրում։ Աստվածածնի ծագման ու ծննդի մանրամասներին անդրադառնալուց հետո, հեղինակը մեկնում է Աստվածածնի վերափոխումը և երկինք բարձրանալը։ Մենք ծանոթանում ենք նաև, թե աշխարհի հռչակավոր գեղանկարիչներն ինչպես են ընկալել ներսի աներևույթ գեղեցկությունը և պատկերել Սուրբ Աննային ու մանուկ Հիսուսին գրկած Սուրբ Մարիամին։*

«Խաչ» *խորագիրը կրող բաժնում մատչելի կերպով բացահայտված է, թե ինչպես մահվան խորհրդանիշ խաչափայտը* «Քրիստոսի զոհաբերությամբ դարձավ բանալի, որով բացվեցին երկնքի Արքայության դռները»։ *Հայաստանը՝ որպես քրիստոնյա երկիր, մի առանձին ակնածանք ունի* Քրիստոսի Խաչի *հանդեպ։ Հայ Առաքելական Եկեղեցու մեծագույն տոներից է* Խաչվերացը, *այսինքն՝* Խաչը *վեր բարձրացնելը։*

Աշխատության հեղինակը ամենայն մանրամասնությամբ, սկսած հինկտակարանյան դրվագներից, խոսում, բացահայտում, պարզում է Խաչի *շուրջ եղած թե՛ եկեղեցական, կրոնական և թե՛ ժողովրդական ըմբռնումները, եզրակացնելով, որ հայ ժողովուրդը ստեղծել և սրբություն է դիտել խաչքարը, որովհետև հավատացել է* Քրիստոսի Խաչի *զորությանը։*

Քրիստոս ասում է, որ ինքը չի եկել օրենքը ժխտելու, այլ եկել է լրացնելու և ամբողջացնելու (Մատթ. Ե. 17)։ Ընդհանրապես շատերն են փորձել Հին և Նոր Կտակարանների միջև տեսնել հակասություններ։ Ի պատասխան, այս հարցի, Ադամ քհն. Մակարյանը հմտորեն փնտրում և գտնում է Հնի ու Նորի կապը։ Ինչպես առանց արմատի չի կարող գոյություն ունենալ

ծառը, այդպես և առանց Հնի չէր կարող լինել Նոր Կտակարանը։ Ահավասիկ, նայում և նկատում է առաքյալների նախօրինակ-նախանշանները Հին կտակարանում. «Հրեական տասներկու նահապետները՝ Հակոբի որդիները, որոնցից սերեց հրեա աստվածընտիր ազգը, նախաօրինակներն էին Քրիստոսի տասներկու առաքյալների»։ *Շարունակելով դիտարկումը, գրում է, որ քանանացիների երկիր գնացած տասներկու հետախույզները նույնպես խորհրդանիշն են Քրիստոսի տասներկու առաքյալների։ Նույն սկզբունքով հեղինակն ուսումնասիրում, պրպտում և Հայտնության գրքում գտնում է խորհրդանիշներ՝ կապված Հիսուս Քրիստոսի և Նրա տասներկու առաքյալների պտղաբեր կյանքերի հետ։ Հստակ ապացույցներով անդրադառնում է առաքյալների տոհմածառերին, Քրիստոսի հետ ունեցած նրանց թե՛ արյունակցական, թե՛ հոգևոր կապերին։*

Աստծու սերը մղել է խորանալ, գնալ պարզելու առաքյալների ծագումն ու ծնունդը։ Եւ մեկ անգամ ևս համոզվում ես, մարդն այնպիսին է լինելու, ինչպիսին նրա ծագումն է, ինչպիսին նրա ընտանիքն է։ Հակոբոս և Հովհաննես առաքյալները, պարզվում է, բարեկամական կապ են ունեցել նաև Հովհաննես Մկրտչի հետ. «Այդ երեք ընտանիքները բարեպաշտ ընտանիքներ են եղել»։ *Սրանք սոսկ պատմություններ չեն, տոհմագրություն չեն, այլև հոգևոր ակունք-սկզբի և ընթացքի բացահայտումներ են՝ Աստծու խոսքի լույսի տակ։ Ժողովուրդն ասում է.* «Պտուղը ծառից հեռու չի ընկնի»։ *Ահավասիկ, այդ իմաստության ճշմարտությունը տեսնում ենք.* «Մարիամ Աստվածածնի պապը Մատթան քահանան էր, որն ունեցավ երեք դուստր՝ Աննա, Սովվե և Մարիամ։ Աննայի զավակը Մարիամ Աստվածամայրն էր, Սովվեինը՝ Հովհաննես Մկրտչի մայր Եղիսաբեթը, իսկ Մարիամինը՝ Զեբեդյանների մայր Սաղոմեն։ Այսինքն՝ Մարիամը, Սաղոմեն ու Եղիսաբեթը մորաքրոջ դուստրեր են»։ *Ըստ այս վկայության, երեք առաքյալները բարեկամ էին Քրիստոսին, այդ նրանք էին, որ ուզեցին գալիք կյանքում նստել Տիրոջ աջ ու ձախ կողմերը։ Բացի այս, խաչյալ Հիսուս Քրիստոս մորը՝ Մարիամին, Հովհաննեսի հոգածությանն է հանձնում նկատի ունենալով նաև արյունակցական, բարեկամական կապը։ Այս ամենով հանդերձ, սույն գրքի բարեպաշտ հեղինակը բերում է հավիտենական ճշմարտությունը, ըստ որի Քրիստոսին առավել սիրելը, մերձ լինելը երևալու էր և երևալու է անձի վարքով, այն է՝ շարչարանակից լինելու աստիճանով։ Ուսանելի է եզրակացությունը.* «...Հովհաննեսի չարչարանքները և մյուս առաքյալների նահատակությունը հանուն Քրիստոսի մեզ սովորեցնում են,

որ կյանքում սերը որևէ մեկի, հատկապես Աստծու նկատմամբ ընդհանրապես պայմանավորված չէ ինչ-որ շահով կամ օգուտով»:

Ինչ է Եկեղեցին, ինչ ենք հասկանում Եկեղեցի ասելով։ Հարցնում և պատասխանում է. «Եկեղեցի ասելով մենք նախ հասկանում ենք հավատացյալ ժողովրդի հավաքականությունը, ապա եկեղեցական կառույցը»: Քրիստոս *ասում է.* «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, ես այնտեղ եմ՝ նրանց մեջ» (Մատթ. ԺԸ. 20): *Ուրեմն, Եկեղեցին պայմանավորված է Աստծու ներկայությամբ, ինչպես երկնքի արքայությունը։ Առաջին Եկեղեցին աստվածաշնչյան Վերնատունն էր, որտեղ աշակերտները Քրիստոսի ներկայության մեջ էին։ Եկեղեցու խորհրդանիշ է նաև Նոյան տապանը, որի հետ կապված սուրբգրային խորհրդածություններ ունի աշխատության հեղինակը.* «Նոյան տապանն ընդունում էր գայլ և գայլ բաց էր թողնում, ընդունում էր ագռավ և բաց էր թողնում ագռավ: Մինչդեռ եկեղեցին ընդունում է գայլ, բայց բաց է թողնում անմեղ գառ, եկեղեցին ընդունում է ագռավ և բաց է թողնում մաքուր աղավնի»: *Կան ճշմարիտ, այն է՝ Քրիստոսի առաքյալների հիմնադրած, և կան ինքնակոչ եկեղեցիներ։ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ մեր Մայր Եկեղեցին է՝* «Բացի Քրիստոսի առաքյալների կողմից հիմնադրված լինելուց, երկու հազար տարի շարունակ եղել է հայ ժողովրդի ապավենը, զարգացրել և կատարելության է հասցրել ազգային մշակույթը և այսօր էլ փրկության և ազգային ինքնագիտակցության պահպանման ճշմարիտ գրավականն է»:

Եկեղեցին, անշուշտ, կարող է օգնել կարոտյալին, կարիքավորին, սակայն «Եկեղեցին առաջին հերթին զբաղվում է մարդու հոգուն և ոչ թե մարմնին վերաբերող հարցերով»: *Զդատապարտելով մուրացկանին, պարզապես հարց է ուղղած նրան ու նրա նմանին՝ խնդրել-փնտրել է արդյոք Աստծու արքայությունը, չէ՞ որ ասված է.* «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և Նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. Զ. 33)*։ Եւ եթե տեսնում ես, որ Աստված քո ուզածը շնորհի, պետք է մոտենաս Իրեն. միայն եկեղեցում է, որ դու Ս. Հաղորդությամբ ճաշակելու ես Քրիստոսի մարմինն ու արյունը։ Այստեղ, այնուհետև, մենք հանդիպում ենք հավիտենական մի ճշմարտության ևս.* «Աստված մարդուն փնտրում է ոչ թե նրանից վերցնելու, այլ տալու համար»: *Սակայն Աստծու պարգևին արժանանալու համար մարդն իր հերթին պարտավոր է հավուր պատշաճի անել իր բաժին գործը, այն է՝ ապրել Աստծու կամքի*

համաձայն։ Հեղինակը հորդորում է նմանվել եկեղեցու մշտավառ կանթեղին՝ ապրելով առաքինի կյանքով և սրտի մեջ շարունակ վառ պահելով հավատքի լույսը։ «Եկեղեցու և հավատացյալների խորհուրդը» *ենթաբաժնում, ի թիվս այս մեկնությունների և հայտնությունների, կարդում ենք հետևյալ եզրահանգումը, որը ծնունդ առնելով ընդհանրական մտքից, գտել է ուրույն ձևակերպում.* «Ե՛ւ եկեղեցական շինությունը, ե՛ւ հավատացյալները եկեղեցի են, առաջինը՝ որպես աղոթավայր, երկրորդը՝ հոգևոր իմաստով։ Եւ երկուսի մեջ էլ ներկա է Աստված, եկեղեցի-աղոթավայրում նաև պատարագումով ներկա է Քրիստոս, իսկ հավատացյալները հաղորդությամբ միանում են Քրիստոսին, զորանում որպես Աստծու հոգեղեն տաճարներ»։ *Ի դեպ, հոգևոր այս խորհուրդներն իրենց արտահայտությունն են գտել հայ գրականության ու արվեստի մեջ։ Աստվածընկալ Ջիվանին երգում է.* «Սուրբ տաճար, մայրիկ», *լուսավոր հոգի Վահան Տերյանը գրում է.* «Տաճար է մեր երկիրը… Սուրբ է ամեն քար»։

Եկեղեցին և պետությունը փոխադարձ ինչ կապի, ինչ փոխհարաբերությունների մեջ են լինելու, հնազանդությունն արդյոք ազատության սահմանափակումն է, որն է հնազանդության և մեղքի միջև գծված սահմանը։ Սրանք հարցեր են, որոնց պատասխանները հստակեցնում են մեր պատկերացումները հնազանդության և ազատության մասին։ Մի պարզ եզրակացություն. մեղք գործողը չի կարող ազատության կենարար շնչով ապրել, քանի դեռ գերի է մեղքին։ Մարդու կյանքի սկիզբը ընտանիքն է, որ մանրակերտն է պետության։ Ինչպիսին պետք է լինի հոր և որդու, մոր և զավակի փոխհարաբերությունները։ Ինչն է, որ առավել անհանգստացնում է ծնողին. «Եթե գավազանով քո երեխային ծեծես, չի մեռնի, դու նրան կհարվածես գավազանով, բայց նրա հոգին կփրկես մահվանից»։ *Ծնողի առաջին գործը երեխային աստվածճանաչության բերելն է, հասկացնելը, որ Աստված վեր է ամենայնից։ Մի շատ կարևոր հետևություն էլ է անում հեղինակը, այն է՝ մարդը պատասխան է տալու ոչ միայն իր կատարած մեղքերի, այլև երեխաներին վատ օրինակ տալու և նրանց դաստիարակության հարցերում թերանալու համար։ Ճիշտ այս տրամաբանությամբ էլ, երկրի ղեկավարը՝ իր վարած քաղաքականությամբ ու գործերով, կարող է մեղքի մեջ գցել մի ողջ ժողովուրդ։*

Ուրեմն, պետությունն ու Եկեղեցին, մեկը մյուսին լրացնում և ամբողջացնում են։ Բնականաբար, Եկեղեցին քաղաքականությամբ չի զբաղվում, կառավարման ձևեր չի առաջադրում, այսուհանդերձ պետական

պաշտոնյան որևէ կերպ չպետք է անտեսի Եկեղեցու դերը, որովհետև՝ «եկեղեցին է հոգևոր ոլորտում աստվածաշնորհ իշխանությամբ առաքելություն իրականացնողը, բայց միևնույն ժամանակ եկեղեցականներն իրենք ենթակա են պետության սահմանած օրենքներին»:

Պետությունը որքան էլ լավ սահմանադրություն մշակի, բայց այն իրագործող՝ պետական գործիչը կամ քաղաքացին, եթե Աստծուց հեռու է, չունի Աստծու սերն ու հավատարմությունը, ավելի ստույգ շնորհի մեջ չէ, միևնույն է օրենքը չի կարողանալու կատարել: Այստեղից պարզ է դառնում՝ Պետությունը, Եկեղեցին և Ժողովուրդը գործելու են միասնաբար: Ամեն ոք գիտակցելու է իր անելիքը, և որպեսզի ի զորու լինի ճիշտ գործելու, գիտություն ստանալուց բացի, ստանալու է քրիստոնեական կրթություն ու դաստիարակություն: Այնպես որ, թե՛ պետական այրերը, թե՛ հոգևոր դասի ներկայացուցիչները նախ՝ Աստծուն ճանաչելու և ապա՝ Աստծու մարմին ժողովրդին ծառայելու են՝ միմյանց հանդեպ ունենալով սիրո և խոնարհության զգացումներ: «Գոռոզությունն ու ամբարտավանությունը պարտվում են սիրուց: Հպարտությունը ոչնչանում է, երբ հանդիպում է սիրո և խոնարհության»*: Մեծ մասամբ պետությունը կործանվում է անբարոյականության պատճառով, իսկ Եկեղեցին կասեցնում է անբարոյականությունն ու պղծությունը, ասել է թե՝ նեցուկ է լինում պետությանը: Եկեղեցին հոգևոր կառույց է, որ բաղկացած է հոգևորականներից. նրանք համեմատաբար քիչ են, բայց իրենց աղոթքներով օգնում են շատերին:*

Ամեն բառի մեջ, թե՛ հեղինակն ինքն է իր էությամբ, թե՝ նա, ում մասին խոսում է: Ինչպես ծառի արմատն է կենսահյութը փոխանցում ծառին, գրում է նա, այդպես և Գրիգոր Լուսավորիչը աստվածային շնորհները փոխանցեց հայ ժողովրդին: Հեշտ չէր քրիստոնեությունը տարածելը: Կռիվը կուռքերի դեմ էր, որովհետև դրանք չարի խորհուրդը կրողներն էին: Հայ իրականության մեջ մինչև այսօր մեղադրողներ կան՝ ինչո՞ւ քանդեցին հեթանոսական տաճարները: Խնդիրն իրականում տաճարները չէին, այլ՝ կուռքերը: Տաճարների դեմ չէր կռիվը, այլ սնոտիապաշտության: Մովսեսը սարից իջնելով, ջարդուփշուր արեց ոսկե հորթը: Ո՞վ մեղադրեց, ոչ ոք: Արդիականացնելով երևույթը, հեղինակը գրում է. «Խորհրդային միության քանդվելուց հետո կուռ դարձածների արձանները չե՞ն վերացնում: Վերացնում են: Այդպես էլ եղավ հեթանոսությունից քրիստոնեության անցնելու ժամանակ: Իսկ ինչ է, տաճարները աղոթատուն լինելուց բացի,

հավատացյալների հավաատեղիներ լինելուց բացի, մշակութային արժեքներ չե՞ն: Այն էլ ինչպիսի՜»:

Հայոց Եկեղեցին օտարների կողմից թյուրիմացաբար ստացել է Գրիգորյան *անվանումը: Ճշմարտապես մոտենալիս, Հայոց Եկեղեցին առաքելական է, Ս. Գրիգորը թեև ինքն է ժողովուրդին մկրտությամբ քրիստոնեացրել, բայց մինչ այդ՝* «Հայաստանում կային եպիսկոպոսական աթոռներ, հոգևոր առաջնորդներ, բազմաթիվ քրիստոնյաներ: Մեր առաջին լուսավորիչներն են Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները»:

Կատարյալ քրիստոնյայի բնության-բնավորության կարևոր հատկանիշներից մեկը խոնարհությունն է: *Քրիստոնեից, այսինքն՝ Քրիստոսից եկող, Քրիստոսի հանգույն խոնարհությունն ընդունողը, ընդունելու է նաև խոնարհներին: Իրենց խոնարհ ձևացնողներ կան, որոնց նպատակն ուրիշներից առավել բարձր ու մեծ երևալն է, մինչդեռ՝* «Նրանք, ովքեր իրականում մեծ են, ոչինչ չգիտեին իրենց մեծության մասին»: *Մարդուն խոնարհության կարող է տանել դիմացինի արժանիքները տեսնելն ու գնահատելը: Մեկը, որ ձգտում է կատարելության՝ չար բանից հեռու մնալով, ուզի թե չուզի, խոնարհ լինելու է: Խոնարհության առաջ է, որ հպարտությունը պարտվելու է, ինչպես որ հեզության առաջ՝ բարկությունը:*

Եսակենտրոն մարդը հեռու է խոնարհ լինելուց: Մարմնավոր մարդը սարսափով է ընդունելու արհամարհանքն ու վիրավորանքը, մինչդեռ հոգևոր մարդը տեղի ունեցած երևույթը քննելու է հոգով՝ վեր կանգնելով հանգամանքներից: Երբ խոնարհությունը կենսակերպ է, տվյալ անձը խոնարհ է լինելու, թե՛ մեծի, թե՛ փոքրի առջև: Իսկ երբ խոնարհությունը ձև է, նպատակին հասնելու միջոց, վերածվելու է քծնողության: Ճիշտ այդպես հեզությունը վերածվելու է երեսպաշտության: Խոնարհ մարդը շարունակ զգալու է աստվածայինը, այսինքն՝ այն, ինչ իր ներքին էության մեջ է և ծածուկ: Երբ մարդու մեջ գործում է աստվածային բնությունը, ո՛չ այլոց գնահատականներով է հիանում ու հպարտանում և ո՛չ էլ, մոլորության մեջ ընկնելով, փորձում խելացի երևալ և ինքն իրեն բարձրացնել այլոց աչքին: Սարսափելի է, երբ խոնարհն սկսում է նկատել իր խոնարհությունը. դա նշանակում է, որ նա փնտրում է իր շահը, մինչդեռ դիմացի ընկերոջ շահը փնտրող-գերադասողն է ճշմարիտ խոնարհը:

Հետաքրքրության և հոգու սննդի քաղցով հասնում ենք գրքի «Հավատք» *բաժնին, ասել է թե՝ մոտենում ենք արմատին: Այստեղ ևս ժամանակավորի և հավիտենականի, մարմավորի և հոգևորի, հավատքի*

զգացումն ունեցողի և չունեցողի, աստվածապաշտի և անաստվածի հավիտենական հակադրությունը և կռիվը տեսնելու ենք։ Դարձյալ ոչ մեկին չի դատապարտում, որովհետև, ասենք, հավատքի զգացումը չունեցողը և տեսողական զգայարանից զուրկը նույնն են, նույն կարգավիճակում։ Մի՞թե կարելի է կույրին մեղադրել չտեսնելու մեջ։ Այդպես և անհավատին մեղադրելն անիմաստ է։ Ուրիշ է, երբ դու մարդուն դարձի բերելու ճանապարհներ ես փնտրում։ Եւ ինչպես որ հավատացյալը կուզենա անհավատին հավատքի բերել, այնպես էլ անհավատն է փորձում հավատացյալին տանել դեպի իրենը, դեպի իր անհավատություն։ Անհավատության գնալը համարժեք է Քրիստոսին ուրանալուն. ճշմարիտ քրիստոնյաները նախընտրեցին ամեն տեսակի հալածանքներին դիմանալ, նախընտրեցին մահը։ Մարդը, որ ընդունել է Քրիստոսին որպես Փրկիչ և այդ դավանանքն ունի սրտի մեջ, հալածանքները սիրով տանելով և համբերելով, արժանանալու է Կյանքի Պսակին, այն է՝ Աստծու Արքայությանը։ Իսկ ի՞նչ է Աստծու Արքայությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծու ներկայություն։ Ուրեմն, նախևառաջ հարկավոր է սրտով մաքուր լինել, «Որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. Ե. 8)։

Արվեստում ևս հավատքի մարդը, քրիստոնյա հավատացյալը, հավիտենական արժեքներ է ստեղծելու՝ տեսնելով և տեսանելի դարձնելով ոչ միայն մարմնի, այլև հոգու աստվածընծա գեղեցկությունը։ Ինչպես որ երկինքն ու երկիրը տարբեր են, նույնպես և երկնային ու երկրային մոտեցումները, չափումներն ու մտածողությունները։ Երկրային մտածողության տեր մարդը, որ նույն մարմնավորն է, ուզում է հասկանալ ու նոր միայն հավատալ, մինչդեռ մտածողության երկնային պարգև ունեցողն սկսում է հավատալուց ու հավատքից, որպեսզի հասկանա՝ գիտակցելով, որ Աստծու ճանապարհները, տարբեր լինելով մարդկանց ճանապարհներից՝ անքննելի են։ Ուրեմն, թո՛ղ ամեն ոք առաջնորդվի «Մինչև չհավատամ, չեմ հասկանա» *հոգևոր նշանաբանով։*

Սույն աշխատության ընթացքը, երկրային և երկնային մտածողությունների շաղախով է, մարդկային և աստվածային ըմբռնումների ընդհանրականությամբ և այդ ընդհանրականության հստակեցմամբ։ Աստծուց եկող երևույթին մարդը կարող է մարդկային մեկնաբանություն տալ։ Մարդը հավատում է ճակատագրին։ Ճակատագիր բառն ասում է, որ գիրը ճակատին է և գրված է Աստծու ձեռքով։ Նման բան չի կարող լինել։ Հիմքում Աստծու նախասահմանումն է, Աստծու ամենագիտությունը։

Ասենք, Աստված նախասահմանում, նախընտրում է ոմն մեկին, որովհետև գիտե, թե այդ մեկն ապագայում ինչպիսին է լինելու: Այսպես, օրինակ, Աստված Իր Դավիթ ծառային ասում է. «Ես քեզ քո մոր որովայնից կանչեցի» (հմմտ. Սղմ. ՃԼԸ. 13), *մեկ այլ անգամ՝ սթափեցնելու կարգով, հիշեցնում է.* «Ես քեզ փարախից կանչեցի»: *Ադամ քհն. Մակարյանը տալիս է իր ձևակերպումներն ու ընկալումները, որոնց բխումը Աստծու մտքից են.* «Աստված նախատեսում է ամեն ինչ, բայց չի նախասահմանում ամեն ինչ: Աստված նախասահմանում է այն բաները, որոնք մեր կամքից չեն կախված և կապ ունեն Աստծու հավիտենական և ընդհանուր ծրագրի հետ»: *Ճակատագիր լինելու պարագային ո՞ւր կմնա Աստծու արդար դատավոր լինելը: Աստված ոչ մեկին ոչինչ չի պարտադրում, ամեն ոք ազատ է ընտրության հարցում: Աստված ցույց է տալիս փրկության և կորստյան ճանապարհները, միաժամանակ հայտնելով փրկության միջոցները: Աստված պարզ ասում է ամենքին.* «Դարձիր Ինձ, որ ես էլ դառնամ դեպի քեզ»: *Փրկությունն Աստծու ներկայության մեջ է: Երբ դու չես բախում Աստծու դուռը, ինչպե՞ս ես մտնելու Աստծու ներկայության մեջ: Օրինակները պարզ են և խորին: Աստված նախասահմանել է, որ արևը լուսավորի և ջերմացնի բոլորին.* «Աստված դուրս չէ մարդկային կյանքից ու պատմությունից, այլ միշտ ներկա է աշխարհում»: *Դու ո՞ւմ կամքն ես կատարում, քո՞, թե՞ Աստծու: Ահա ամբողջ խնդիրը: Պետք է իմանալ նաև, որ Աստծու կամքը քո փրկության համար է: Աստծու ներգործությունը նկատելի է նրանց կյանքում, ովքեր ճիշտ ճանապարհի վրա են: Ո՞ւմ հետ են կատարվում հրաշքներ. նրանց, ովքեր հեռացել են չարից և հուսացած են Աստծուն: Ուրեմն, ոչ թե հավատալ ճակատագրին, այլ հավատալ Աստծուն: Փնտրի՛ր Աստծուն և կազատվես բոլոր կարգի դիվային կապանքներից: Դևն է, որ քեզ համար կարող է մահ սահմանել, Աստված կյանքի Աստված է և քեզ համար սահմանել է կյանք, այն էլ հավիտենական:*

Ամեն բանից առաջ և ամեն բանից հետո, մարդը կոչված է վկայելու Աստծուն, որի ներգործությամբ երկրային կյանքում տեղի են ունենում հրաշքներ: Հրաշքը սկիզբ է առնում նախ՝ մարդու հավատից առ Աստված և ապա բուռն ցանկությունից ու նվիրումից: Աստծու ստեղծած աշխարհը լի է հրաշքներով: Հրաշքներ են կատարվում մարդու հետ, որոնց ինքն անգամ տեղյակ չէ: Մարդկային իմաստությունը, որ փիլիսոփայություն *անունն է ստացել, մարդուն ո՛չ աստվածճանաչության է տանելու և ո՛չ էլ փրկության: Ավելին՝ մարդն իր խելքով հանգելու է կռապաշտության,*

այն է՝ Ստեղծողին թողած, ստեղծածն է պաշտամունքի առարկա դարձնելու։ Հրաշքը մարդու նույնիսկ գիտական մտքից, մտածություններից, ըմբռնումներից վեր է։ Համեմատելի չեն չափանիշները։ Ոմանք կարծում են հավատքը հրաշքից է, ո՛չ. «Հրաշքն է հավատից»։ «Միայն հրաշքի վրա հիմնված հավատը սին է»։ *Մարդու աստվածային բնության, մարդուն կենդանուց տարբերելու լավագույն վկայությունը խիղճն է։ Հրաշալի է եզրահանգումը.* «Վագրը պատառոտում է իր որսը և հանգիստ քնում, մարդը դառնում է մարդասպան և մնում անքուն»։ *Հենց այնպես ասված խոսք չէ՝ Աստված մարդու խղճի մեջ է, այլ կերպ ասած, խիղճն Աստծու գոյության հզորագույն ապացույցներից է։*

Մարդը ձգտում է կատարելության, Աստծու խոսքը, որ հավիտենապես գործող հրաշք է, կարող է մարդուն փոխել և տանել կատարելության ու փրկության։ Ամենամեծ հրաշքն, անշուշտ, Աստծու խոսքով Աստծու ներկայության մեջ գալն է. «Երեխայի պես նետվում եք Աստծու գիրկը՝ գտնելով հոգևոր խաղաղություն և բացահայտելով երջանկության գաղտնիքը»։ *Աստված ոչ մի բան, ոչ մեկին չի պարտադրում։ Աստծու պարգև է ազատությունը։ Մարդը հնարավորություն ունի ազատ ընտրության.* «Բարին իրական է միայն այն ժամանակ, երբ ընտրված է ազատ կամքով»։

Կարևոր է ճիշտ պատկերացում ունենալ հրաշքի մասին։ Նա, որ Աստծու սերն ունի, Աստծու սիրո մեջ է, և սերն է իր մեջ, հրաշքներ չի փնտրելու, սակայն դրանք կատարվելու են իր կյանքում։ Մարդու հոգու աչքը բանալը, հոգու խավարը ցրելը և դեպի Լույսը տանելն ավելի մեծ հրաշք է, քան մարմնի աչքը բանալը։ Ասված է, չէ՞. «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»։ *Հրաշք չէ՞, երբ ներում ես քո թշնամուն։ Հրաշք չէ՞, երբ* «Մի պարզ արարքով և խոսքով կամ հայացքով կարողանում ես ջերմացնել մեկի հոգին և ժպիտ նկարել նրա դեմքին»։

Հրաշքների ոլորտում զգալի տեղ է հատկացվում բժշկությանը։ Հիվանդություններ կան, որ մարդն ի զորու է բժշկել, հիվանդություններ էլ կան, որոնց բժշկությունը գալու է աղոթքների միջոցով և բժիշկների բժիշկ Աստծուն դիմելով։ Քրիստոնեությունը որպես երկնային ուսմունք և որպես երկրային կենսակերպ, չէր կարող անտեսել բժշկության կարևոր դերը մարդկային կյանքում։ Եկեղեցին, որպես հոգևոր կառույց, ինչպես Հիսուս Քրիստոսն ասում է, որպես Երկնային Հոր երկրային տուն, միաժամանակ բժշկարան է, մարդու հոգին ու մարմինը բժշկելու վայր։ Այստեղ ձրի առածը ձրի էլ տալիս են, այսինքն՝ Աստծու

շնորհը կրող և բժշկելու իշխանություն ունեցող հոգևոր հայրը չի վարձատրվում, նրա վարձքը երկնքում է: Հոգևոր հայրերը գործի են դնում նաև բժշկագիտության իրենց իմացությունը: Աշխարհում կան բժիշկ մասնագետներ, որոնց եկեղեցին սրբադասել է՝ նկատի ունենալով նրանց վարքն ու գործերը: Հիվանդություններ կան, որ բնույթով հոգևոր են, հոգու հետ կապված, այստեղ դեղամիջոցն անելիք չունի: Չարությունն ու վիրավորանքը, ատելությունն ու տագնապը, աշխարհական կյանքի պարտադրած մտածմունքները քայքայում են մարդու մարմինը, խաթարում՝ հոգին: «Բժշկություն» *բաժնում պարզ ասված է, որ մարդու առ Աստված ունեցած հարաբերություններով* «Բուժվում է նաև հոգին, և Աստծու օրհնությունն է իջնում մարդու վրա»: *Աստծու օրհնությունից այն կողմ բժշկություն կա՞: Օրհնություն ստանալիս, ներվում են մեղքերը, իսկ մարդու մեջ բուն դրած հիվանդությունները մեծ մասամբ մեղքի պատճառով են: Պատահաբար ո՛չ կուրացածներ կան, ոչ համր և ոչ էլ հաշմանդամ դարձածներ: Բժշկելիս Հիսուս Քրիստոսն ինչ է ասում.* «Քո մեղքը քեզ ներված է»:

Ահա մի դեղատոմս-դեղամիջոց ևս. «Օգտվել Աստծու շնորհած բարիքներից, պտուղներից... փոխաբերական և հոգևոր իմաստով դեղ է նաև Աստվածաշունչը»: *Մարմինն իր պետքերն ունի, բայց մարմինը մարդու կյանքը չէ, կյանքը հոգին է, որի սնունդը տալիս է Աստծու խոսքը, որ Աստվածաշունչն է: Լույսն այստեղ է ու այստեղից, կյանքն այստեղ է ու այստեղից, դեպի հավիտենություն, դեպի կատարելություն, դեպի երկինք ու Երկնքի Արքայություն տանող ճանապարհ-միջոցն այստեղ է ու այստեղից: Այս ու այստեղ է մտքի պարզության խորությունը և խորության պարզությունը: Վաղո՛ւց նկատած, իր բնույթով հավիտենական, ճշմարտությունը կա.* «Ուր Սուրբ Գիրքը բաց չէ, այնտեղ անսահման խավար է տիրում, ուր Սուրբ Գիրքը միայն մասամբ է բաց, այնտեղ միայն օրվա արշալույսն է բաց, և ուր Սուրբ Գիրքը իր ազատական էջերը բացել է ժողովուրդների առջև, այնտեղ տիրապետում է քաղաքակրթության լուսավորումը»:

Ոչ միայն Աստվածաշունչն է սուրբ, այլև նրա թարգմանիչները. սրբեր են, սրբված, որովհետև սրբությանը մեկ այլ կերպ մոտենալ հնարավոր չէ: Թարգմանությունը նախաձեռնողներ Ս. Սահակ Պարթևն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը փափագ ունեին՝ զորացնել հայ ազգը: Արդյունքում Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը հայտնի դարձավ «Թարգմանությունների թագուհի» *անունով: Հիրավի,* «Թարգմանիչները մեծ

ծառայություններ մատուցեցին... լուսավորեցին հայ ժողովրդի խիղճը և բացեցին նրա հոգևոր աչքերը»:

Աստծու շնչով հնչած խոսքին և Աստծուց եկող հայտնություններին մարդկանց հաղորդակից դարձնողները նախ՝ մարգարեներն են և ապա՝ առաքյալները, սակայն երկուսի մեջ գործողը միևնույն Սուրբ Հոգին է: Մարգարեները մարդուն ազատելով վախի կապանքներից, հորդորելով, որ Աստծու կամքի համաձայն ապրելով, Աստծուն հավատարիմ գտնվելով միայն կարող են հաղթահարել դժվարությունները, միաժամանակ մարգարեանում էին Քրիստոսի գալստյան, փրկագործության մասին: Բայց, ահա, Քրիստոսի պայծառակերպության ժամանակ հայտնված Մովսեսն ու Եղիան, որ խորհրդանշում էին օրենքն ու մարգարեությունը, անհետանում են: Առաքյալները տեսնում են միայն Քրիստոսին: Ահա մեկնությունը. «Քրիստոսն է օրենքների և մարգարեությունների լրումը»: *Բայց.* «Հավատարիմ մնանք օրենքի ոգուն և ոչ թե կառչած լինենք օրենքի տառից»: *Տառ, որ ասում է, գիրը նկատի ունի, այն անհոգին, որ սպանում է մարդուն՝ ըստ աստվածաշնչյան վկայության: Իսկ մարդու սրտից ելած, մարդու մտքի արգասիք՝* «Հեռուստատեսային ծրագրերը, շոուները, ֆիլմերը և նույնիսկ փողոցներում տեղադրված գովազդային հսկա պաստառները մեղսալի կյանք են քարոզում»: *Հետևություն. չարի հոգին փորձում է աչքով ու ականջով պղծել այս աշխարհը: Մարդուն փորձությունների մեջ գցողը նույնպես չարի հոգին է:*

Հիսուս Քրիստոս երկնքից երկիր իջավ որպես Լույս, որպես Լույս ծագեց խավարի մեջ. «Եկավ և մարդկությանը բարձրացրեց հոգևոր, բարոյական ավելի բարձր հարթակի... Ոչ միայն ցույց տվեց ճիշտ ճանապարհը, այլև մարդկությանը շնորհներ տվեց՝ Իր ավանդած պատվիրանները կատարելու համար»:

Ամեն բանում կատարելության հասնել հնարավոր է միմիայն Քրիստոսով, Քրիստոսին նմանվելով ու հետևելով: Աստծուն մերձենալու նախապայմանը մեր այս վաղանցուկ ու նաև անօրեն աշխարհական կյանքի ճանապարհին, աստվածային սրբությունը պահելն է: Աստված ասում է. «Սո՛ւրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ» (Ա. Պետր. Ա. 15-16): *Ահա մեկ այլ հորդոր ևս.* «Կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե. 48):

«Քրիստոնեական իսկություն» *աշխատությունը համակողմանիորեն պարզ է դարձնում, թե ինչ է եկեղեցական ծեսը, ինչ է քարոզը, ինչ է*

հոգին և ինչ՝ մարմինը: Մարդկային թյուր կարծիքով մարմինը բանտ է հոգու համար, մինչդեռ իրականում, քրիստոնեության իսկության պարագային, մարմինը Սուրբ Հոգու տաճար է: Ադամ քհն. Մակարյանը բերելով աստվածային գիտության լույսը, հստակեցնում, զանազանում և առանձնացնում է աստվածպաշտությունը ձևապաշտությունից: Սրտի խոր ցավով գրում է. «Մարդը չի կարողանում կողմնորոշվել, թե որտեղ է վերջանում մամոնայի պաշտամունքը և որտեղ է սկսվում Աստծու պաշտամունքը... Հաճախ անունով քրիստոնյա, բայց էությամբ հեթանոս են»*:*

Անկասկած, ամեն մարդ կկամենար ապրել այնպես, որ արժանանար հավիտենական կյանքի, այլ կերպ ասած՝ կուզենա Աստծու ներկայության մեջ հայտնվել: Հարց. «Ինչպե՞ս»: Աստծու տված կերպ-պատկերը պահելով, աստվածային բնությունից չհեռանալով. «Մարդկային բնությունն ավելի կարևոր և բարձր է, քան մարդկային կամքը»: *Մարդկային բնություն ասելով, հեղինակը, բնականաբար, նկատի ունի Աստծու տված պատկերն ու նմանությունը կրելը: Բայց, այնուամենայնիվ, մարդը ձգտում է մարդկային, մարմնական երջանկության և այն փորձում է գտնել հաճույքի մեջ: Այստեղ ևս հեղինակը տալիս է իր հակիրճ ձևակերպումը.* «Մարդը պետք է պարզապես օգտվի մարմնականից և հաճույք ստանա հոգևորից»: *Հիրավի, երանելի են նրանք, ովքեր աստվածային բնության մեջ են և ամուսնական անկողինը դիտում են որպես սրբություն: Ի դեպ, դիտարկվող գրքում հոգևոր պատերազմ ենք տեսնում խելահեղ աշխարհի սրբապղծության դեմ: Հոգևոր անդորրի մեջ, հոգևոր լռության մեջ, այստեղ, այս աշխատության հոգևոր դաշտում լսելի է ժամանակակից կյանք-անապատում հնչող ձայնը.* «Ապաշխարեցե՛ք, ապաշխարեցե՛ք, ուղղեցե՛ք ձեր ճանապարհները... Տիրոջ գալուստը մոտ է»:

Որպես ամփոփումն այս աշխատության բովանդակության, տեղին է պատառիկ մեջբերել հեղինակի առաջաբանից. «Դարեր շարունակ հայոց պետականության բացակայության պայմաններում եկեղեցին էր, որ հովվեց հայ ժողովրդին և նրա օրհնությամբ ու ջանքերով մեր ժողովուրդը համախումբ իրականություն դարձրեց անկախ Հայրենիքի իր երազը... Եկեղեցականներն իրենց սպասավորությունը միշտ ընկալել, իրականացրել և իրականացնում են որպես Ուխտյալ ծառայություն Աստծուն, ազգին և Հայրենիքին...»: